Աստղիկ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՀՊՏՀ ասպիրանտ

2015 թ. գերազանցությամբ ավարտել է ՀՊՏՀ-ն՝ վիճակագրի որակավորմամբ և ընդունվել ասպիրանտուրա: Վիճակագրության ամբիոնի դասախոս է և ասպիրանտ: 2017 թ.-ից ՀՊՏՀ «Ամբերդ» հետազոտական կենտրոնի աշխատակից է: Հեղինակ և համահեղինակ է ՀՀ, ինչպես նաև ԵԱՏՄ աշխատաշուկայի, միգրացիայի, կրթական և այլ ոլորտների վերաբերյալ մի շարք հետազոտությունների:

ՀԱՅԱՍՏԱՆԸ՝ 4-ՐԴ ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆՈՒՄ. ԱՊԱԳԱ ԱՇԽԱՏԱՈՃԻ ՆԵՐԿԱՆ

Հիմնաբառեր. *աշխատաշուկայի զարգացման միտումներ, զբաղվածների հաշվառում, ապագայի աշխատաշուկա, գիգ տնտեսություն, անկախ աշխատակից, ֆրիլանսեր*

Վերջին տարիներին միջազգային կազմակերպությունների զեկույցներում հաճախ ենք հանդիպում «աշխատուժի վերափոխում», «ապագայի աշխատաոճ» և նույնաբովանդակ այլ հասկացությունների ու դրանցից բխող անհանգստությունների: Ինչ է իրականում տեղի ունենում:

Մի քանի տարի է, որ ինչպես ողջ աշխարհում, այնպես էլ Հայաստանում, մարդկանց առօրյա հոգսերը նշանակալիորեն թեթևացել են՝ շնորհիվ համացանցում իրականացվող առևտրի (երբ վաճառքի վայրն առկա չէ), հեռախոսային հավելվածով տաքսի պատվիրելու, տնից համակարգչով աշխատանք կատարելու և դրա դիմաց վարձատրվելու և այլն: Գործունեության նշված ձևերն ունեն մեկ ակնհայտ ընդհանրություն՝ իրականացվում են առցանց: Դրանցում զբաղված բոլոր մարդիկ կազմում են զբաղվածների նոր խումբ, որ կոչվում է ֆրիլանսեր (freelancer): Արտասահմանում արդեն մի քանի տարի է՝ շրջանառվում է մի նոր հասկացություն ևս՝ «gig economy» («գիգ տնտեսություն»):

Ինչ է «գիգ տնտեսությունը»:

Հենց այս եզրույթն է իր մեջ ներառում տեխնոլոգիական առաջընթացի արդյունքում ձևավորված զբաղվածության վերոնշյալ ձևերը: Զբաղվածության տեսակներ, որոնց հետզհետե ավելի հաճախ ենք առնչվում. «գիգ տնտեսությունն» աստիճանաբար սկսում է ընդգրկել աշխատուժի ավելի մեծ զանգված, և յուրաքանչյուր հաջորդ ուսումնասիրություն միայն վերահաստատում է այդ փաստը: Բացառություն չէ նաև MBO Partners-ի «The State of Independence in America 2019» 9-րդ տարեկան զեկույցը[1],

[1] https://s29814.pcdn.co/wp-content/uploads/2019/06/MBO-SOI-2019.pdf

որի այս տարվա խորագիրն է «Ամերիկյան աշխատուժի վերափոխվող էությունը»: Ինչ կարևոր արդյունքներ է այն ամփոփում: Պարզվում է՝ 10-ից 9 ֆրիլանս աշխատակից շատ բավարարված է իր աշխատանքով, լրիվ դրույքով աշխատող 10-ից 7 ֆրիլանս աշխատակից նախատեսում է շարունակել իր գործը, մեծ մասն իրեն ֆինանսապես ավելի ապահով է զգում՝ որպես «անկախ», քան ավանդական աշխատատեղերի աշխատակից, ինչը զեկույցի հեղինակները համարում են ռեկորդային ցուցանիշ: «Անկախ» աշխատակիցները նաև առաջ են մղում տնտեսությունը. նրանք այս տարի 1,3 տրիլիոն ԱՄՆ դոլարի օգուտ են բերել ԱՄՆ-ի տնտեսությանը, ինչը երկրի ՀՆԱ 6,28 տոկոսն է և համադրելի է Իսպանիայի ՀՆԱ-ի հետ: Նրանք մեծապես նպաստում են նաև համաշխարհային տնտեսության զարգացմանը. ապրանքների և ծառայությունների 22 տոկոսը վաճառվել է ԱՄՆ-ից դուրս, որը 2013 թ. համեմատ 10 տոկոսային կետով բարձր ցուցանիշ է: Զեկույցի կարևոր եզրահանգումներից մեկն էլ այն է, որ առաջիկա տարիներին աշխատողների համար «անկախությունը» կմնա որպես նախընտրելի կենսաձև: Ուստի, ընդգծելով ԱՄՆ-ի տնտեսությունում ֆրիլանսերների ունեցած մեծ դերակատարումը, կարևորվել է յուրաքանչյուր կազմակերպության աշխատուժի ներգրավման ռազմավարությունում նման աշխատակիցների ընդգրկումը[2]:

Ըստ Payoneer-ի հրապարակած «Գիգ-տնտեսության համաշխարհային ինդեքսը»[3] զեկույցի՝ 2019 թ. ֆրիլանս շուկայում եկամտի ամենամեծ աճ արձանագրած երկիրը հենց ԱՄՆ-ն է՝ 78% (գծապատկեր 1): Տասնյակում են Միացյալ թագավորությունը (59%), Բրազիլիան (48%), Պակիստանը (47%), Ուկրաինան (36%), Ֆիլիպինները (35%), Հնդկաստանը (29%), Բանգլադեշը (27%), Ռուսաստանը (20%), իսկ տասնյակը եզրափակում է Սերբիան (19%):

ԱՄՆ-ից բացի, տվյալ շուկան հետևողականորեն ուսումնասիրվում է նաև Միացյալ Թագավորությունում: Եռամսյակային պարբերականությամբ այստեղ հրապարակվում է «Ֆրիլանսերի վստահության ինդեքս» հակիրճ զեկույցը[4], որտեղ բնութագրվում են ֆրիլանս շուկայի ընդհանուր միտումները: Առավել համապարփակ է եղել 2017 թվականին հրապարակված զեկույցը[5], որտեղ մասնավորապես նշվել է, որ ֆրիլանսերները Միացյալ Թագավորության տնտեսությանը բերել են 119 մլրդ

ԳԾԱՊԱՏԿԵՐ 1

Երկրների առաջատար տասնյակն ըստ ֆրիլանս շուկայում եկամտի աճի
(նախորդ տարվա նկատմամբ %, 2019 թ.)



[2] Նույն տեղում:
[3] https://pubs.payoneer.com/images/q2_global_freelancing_index.pdf
[4] Freelancer Confidence Index Q2 2019, https://www.ipse.co.uk/resource/freelancer-confidence-index-q2-2019.htmll
[5] https://www.ipse.co.uk/resource/exploring_the_uk_freelance_workforce_in_2016.html

ֆունտ ստեռլինգի օգուտ, նրանց թիվը 2008-2016 թթ. աճել է 43 տոկոսով՝ կազմելով 2 մլն մարդ, և 79 տոկոսով ավելացել է ֆրիլանսեր մայրերի քանակը (յուրաքանչյուր 7-րդ ֆրիլանսերն աշխատող մայրիկ է):

Ինչպիսին է պատկերը Հայաստանում:

Նախ՝ նշենք, որ ՀՀ-ում տվյալ ոլորտը հետազոտված չէ, ուստի իրավիճակը փորձենք ներկայացնել՝ ըստ արտասահմանյան աղբյուրների:

Այսպես՝ աղյուսակ 1-ի տվյալներից պարզվում է, որ աշխարհի 175 երկրի շարքում Հայաստանը 4-րդն է՝ ըստ 1000 բնակչին ընկնող ֆրիլանսերների թվաքանակի, միաժամանակ, առաջինն է՝ ըստ գրանցված ակտիվ ֆրիլանսերների տեսակարար կշռի (26,85%): Մի շարք երկրներում այս ցուցանիշն ավելի բարձր է, օրինակ՝ Չադում՝ 66,67%, սակայն դա ստացվել է 2 ակտիվ և 3 գրանցված ֆրիլանսերների թվաքանակների հարաբերությամբ, ինչն անհամեմատելի է Հայաստանի 1698 ակտիվ ֆրիլանսերների թվաքանակի հետ (ՀՀ-ում գրանցվածների թիվն ընդամենը 6325 է): Նկատենք նաև, որ ֆրիլանսերների իրական թիվն էլ ավելի մեծ է, քանի որ ոչ բոլորն են գրանցված ֆրիլանս կայքերում:

Ֆրիլանսերների հաշվառման գործընթացի կարևորությունն ու հրատապությունն ընդգծում է մի հանգամանք ևս. ֆրիլանսերների աճող թվաքանակը և նրանց՝ հարկման դաշտում իրավական կարգավորման բացակայությունն ուղղակի ազդեցություն են ունենում և ունենալու են բյուջեի եկամտային մասի վրա: Այս մասին բազմիցս հիշատակվում է «Հարկային քաղաքականությունը փոփոխվող աշխարհում՝ ներառական աճի համար» ՏՀԶԿ զեկույցում[6]:

Այսպիսով՝ ՀՀ-ում, ինչպես և աշխարհի շատ երկրներում, ֆրիլանս շուկան աստիճանաբար զարգանում է և ընդգրկում գործունեության նորանոր բնագավառներ: Մարդիկ նախընտրում են իրենց աշխատանքում լինել անկախ, արդյունավետ կառավարել իրենց ժամանակը, հետևաբար՝ ավելի երջանիկ են, քան ավանդական աշխատատեղերում: Ուստի անհրաժեշտ է կարևորել այս արագ զարգացող շուկայի ուսումնասիրումն ու համակարգումը: Ավելին, ՀՀ տնտեսության զարգացմանը, այդ թվում՝ զբաղվածության քաղաքականությանն ուղղված ծրագրերը պետք է ելնեն արդեն հայտնի իրողություններից և մշակվեն՝ հաշվի առնելով վերջիններիս աճի աննախադեպ միտումները:

ԱՂՅՈՒՍԱԿ 1

Ֆրիլանսերների տեսակարար կշիռն ըստ երկրների (2018 թ.)[7]

Երկիրը	Երկրի դիրքն ըստ ֆրիլանսեր /1000 բնակիչ հարաբերակցության	Ֆրիլանսեր /1000 բնակիչ	Ակտիվ ֆրիլանսերների կշիռը գրանցվածների մեջ (%)
Սերբիա	**1**	**3,52**	**22,49**
ՆՀՀ Մակեդոնիա	2	3,41	22,12
Ճամայկա	**3**	**2,43**	**9,35**
Հայաստան	4	2,18	26,85
ԱՄՆ	**5**	**1,72**	**13,90**
Ուկրաինա	**13**	**1,19**	**25,78**
Կանադա	15	1,12	11,61
Բուլղարիա	**20**	**1,03**	**18,95**
Սինգապուր	21	1,03	7,92
ԱՄԷ	**24**	**1,02**	**7,83**
Միացյալ Թագավորություն	31	0,82	11,51
Վրաստան	**33**	**0,73**	**18,74**
ՌԴ	66	0,31	19,87

[6] http://www.oecd.org/g20/Tax-policies-for-inclusive-growth-in-a-changing-world-OECD.pdf
[7] https://analyticshelp.io/blog/global-internet-freelance-market-overview-2018/